ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

25 Հուլիսի 2017 թվականի N 80

ՄԱՐԱՏ ԹԵԼՄԱՆԻ ՇԱՀԳԵԼԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը,որ Մարատ Շահգելդյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Ազատության փողոց 8-րդ նրբ. թիվ 9 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարատ Շահգելդյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Ազատության փողոց 8-րդ նրբ. թիվ 9 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=52.24քմ «ինքնակամ բնակելի տունը», S=5.57քմ <<ինքնակամ աստիճանավանդակը>>, S=111.84քմ <<ինքնակամ բնակելի տունը>>, S=18.24քմ <<ինքնակամ բաց պատշգամբը>>, S=1.50քմ <<ինքնակամ աստիճանավանդակը>>, S=4.64քմ <<ինքնակամ զուգարանը>>, S=27.12քմ <<ինքնակամ անավարտ շինությունը>>, S=8.67քմ <<ինքնակամ պարիսպը>> և S=13.55քմ <<ինքնակամ պարիսպը>> համարել օրինական՝ հիմք ընդունելով <<ԳԵՈԿԱԴ 55>> ՄՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցվածքները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ տնամերձ հողամասին կից և իր կողմից օգտագործվող 79.3քմ ավել զբաղեցրած հողակտորը համարել իր սեփականությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 Հուլիսի 2017 թվականի N 81

ԷՄԱՆՈՒԻԼ ԲՈՐԻՍԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էմանուիլ Բորիսի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզ Ձորաղբյուրի-1 զան. այգետարածքի 18 տաղ. թիվ 1 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էմանուիլ Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուրի-1 զան. այգետարածքի 18 տաղ. թիվ 1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=187.71քմ «ինքնակամ այգետնակը», S=9.4քմ «ինքնակամ լողավազանը», S=29.14քմ «ինքնակամ հարթակը» և S=5.75քմ «ինքնակամ պարիսպը» համարել օրինական՝ հիմք ընդունելով «Ս. Աբրահամյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ շինության օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ այգեհողամասին կից և իր կողմից օգտագործվող 37.81քմ ավել զբաղեցրած հողակտորը համարել իր սեփականությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 Հուլիսի 2017 թվականի N 82
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Իզաբելլա Երվանդի Օգանեզովային սեփականության իրավունքով պատկանող 07-042-397-007 և 07-042-397-008 կադաստրային համարների հողակտորներում տալ շինարարության թույլտվություն ջերմոցային տնտեսության շինությունների և տարածքի պարսպապատման շինարարական աշխատանքներ կատարելու համար:

2. Իզաբելլ Օգանեզովային սեփականության իրավունքով պատկանող 07-042-397-007 և 07-042-397-008 կադաստրային համարների 2938.5քմ հողամասերի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի՝ համաձայն կից ներկայացվող հատակագծի:

3. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4. Պարտավորեցնել Իզաբելլա Օգանեզովային

1/շինարարության աշխատանքները սկսելու համար առնվազն 3 օրվա ընթացքում տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն թիվ 2-5 ձևի:

2/ Մուծելու սահմանված տեղական տուրքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՁԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 Հուլիսի 2017 թվականի N 83
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սուսաննա Սարգսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 07-042-0338-0158 կադաստրային համարի հողակտորում տալ շինարարության թույլտվություն գյուղ. մթերքների վերամշակման տնտեսության շինության և տարածքի պարսպապատման շինարարական աշխատանքներ կատարելու համար:

2. Սուսաննա Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 07-042-0338-0158 կադաստրային համարի 3280.26քմ հողակտորից 3000քմ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի՝ համաձայն կից ներկայացվող հատակագծի:

3. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4. Պարտավորեցնել Սուսաննա Պետրոսյանին
1/շինարարության աշխատանքները սկսելու համար առնվազն 3 օրվա ընթացքում տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչությանը՝ համաձայն թիվ 2-5 ձևի:
2/ Մուծելու սահմանված տեղական տուրքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 Հուլիսի 2017 թվական N 84

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 18-ի դրական եզրակացությունը և Ձորաղբյուր համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 25-ի N30 որոշումը՝

Որոշում եմ

1. Ձորաղբյուր համայնքի վարչական տարածքում գտնվող «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, ծածկագիր՝ 07-042-0404-0021, 0.913հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը՝ 40 948 050 /քառասուն միլիոն ինը հարյուր քառասունութ հազար հիսուն/ ՀՀ դրամ համայնքի բյուջե վճարելուց հետո, որը պետք է փոխանցվի Աբովյանի ՏԳԲ-ի, 900105221171՝հողի օտարումից եկամուտներ, հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ